

ՍԵՌԱԿԱՆ ՀՈՒՆԿԻ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՊԱՏՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ժամանակակից գրական հայերենը քերականական զանազան իմաստներ արտահայտելու համար հոմանիշ ձևություներ ունի, որոնց առկայությունը հիմնավորվում է նրանց կիրառությունների տարբեր նրբերանգներով:

Հոլովական համակարգում զուգահեռ ձևերը և լեզվական նորմից կատարված շեղումները գերազանցապես պայմանավորված են լեզվում նրանց գործածությամբ, ինչպես նաև տարբեր հոլովումների փոխադարձ ներթափանցման, մասամբ էլ բարբառների անմիջական ազդեցությամբ:

Արդի հայերենի հոլովման համակարգում նույնանիշ վերջավորությունների առատություն է նկատվում հատկապես սեռական հոլովի իմաստն արտահայտելու համար, որի կազմությունը հիմք է դառնում նաև ժամանակակից հայերենի հոլովումները դասակարգելու, սահմանազատելու համար: Այդ նույնանիշ ձևություներն են՝ ի,ու,ան,վա,ոչ,ց, ո, ա: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր գործառնության - զուգորդելիության հատուկ ոլորտը, սակայն այդ նույն ձևություները հաճախ զուգորդվում են միևնույն բառին՝ ստեղծելով բառերի քերականական զուգահեռ ձևեր:

Ըստ Մ. Ասատրյանի՝ հոլովական զուգաձևությունների առկայությունը պայմանավորված է քերականական մի շարք հանգամանքներով. ա/ ժամանակակից հայերենի ընդհանրական հոլովման՝ ի հոլովման գերիշխող դիրքով, նրա՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու կարողությամբ, բ/ձևային, իմաստային և ձևաիմաստային հոլովումների փոխներգործություններով, գ/ժամանակակից հայերենի հոլովական ձևերի առկայությամբ, այսինքն՝ պատմական գործոններով (պատմական հոլովումների առկայությամբ): Սակայն դրանցից հիմնականը առաջինն է, այսինքն՝ ի հոլովման գերիշխող դիրքը:¹

Գեղարվեստական գրականության լեզուն ունի իր առանձնահատկությունները, իսկ յուրաքանչյուր գրողի լեզուն՝ իր ինքնատիպությունը: Բազմահարուստ են Ավ. Իսահակյանի արձակի լեզվաոճական առանձնահատկությունները, որոնք և ոճական, և գեղագիտական որոշակի արժեք են ներկայացնում:

¹ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Եր., 1970, էջ 189:

Գրողի, ստեղծագործողի լեզվաոճական բազմազանություններ ստեղծելու հարցում սեռական հոլովման ավելի լայն հնարավորություններ է տալիս, որովհետև այն ունի բազմաթիվ հոլովիչներ: Հոլովման տատանումները դրսևորվում են գոյականների եզակի թվում:

Ըստ լեզվական նորմի՝ գոյականների մեծ մասը պատկանում է ի հոլովման, այն ընդհանրական հոլով է: Իսահակյանի խոսքում, որպես կանոն, հիմնականում կիրառվում են գրական լեզվին յուրահատուկ քերականական ձևերը: Օրինակ՝ «Կուժը դնում է աղբյուրի ծորակի տակ...»:

«Բանտապահների օգնությամբ մի կերպ հազնվեց»² (Բուդդիան):

Ի հոլովման են ենթարկվում դուստր, կայսր և -ունդ, -ուստ, -իստ վերջածանցներ ունեցող մի քանի բայանուններ՝ փախուստ, գալուստ, թաքուստ, հանգիստ, ծնունդ: Սակայն սրանք ունեն գրաբարյան տարբերակներ, որոնք գրքային են և սահմանափակ կիրառություն ունեն: Արդյունքում գրական նորմի շրջանակներում գործող գուգածնություններն են՝ դուստրի կամ դստրի // դստեր, կայսրի // կայսեր, փախուստի // փախստյան, հանգստի // հանգստյան, գալուստի // գալստյան: Ավ. Իսահակյանի արձակի մեծածավալ տիրույթում հանդիպել ենք նշված երկձևությունների գործածության որոշակի դրսևորումների. կայսր բառի սեռական հոլովածը հանդես է գալիս և՛ կայսեր, և՛ կայսրի ձևերով.

«Եվ նրանցից մեկը հասավ կայսեր ականջին» (Լի-Թայի Պո-86):

«... ճառագայթների մի խումբ ընկնում է կայսրի դեմքին» (Զինական մի հին գրույց-230):

Ու հոլովման են պատկանում ի-ով վերջացող, անկողին, մարդ, ամուսին, ծի բառերը, ինչպես նաև անորոշ դերբայը:

Սանուկ Աբեղյանն իր «Աշխարհաբարի քերականություն» աշխատության մեջ նշում է, որ «ի» ձայնավորով վերջացող գոյականները սովորաբար պատկանում են «ու» հոլովման (այգի- այգու, որդի-որդու և այլն), քայք կարող են և «ի» հոլովման տակ՝³ Ի ձայնավորով վերջացող բառերի այդ հոլովման գուգածնությունն արտահայտված է նաև Իսահակյանի պատմվածքներում, որտեղ գրական տարածված ձևերի կողքին՝ արմավենի-արմավենու, նոճենի-նոճենու, կան նաև այսպիսիները՝ կաղնիի, բարդիի, նոճիի, այրիի, օղիի և այլն:

² Ավ. Իսահակյան, Եժ, հ.3, Երևան, 1975, էջ 140 (Այսուհետև հատորյակից մեջբերումների հղումները կտրվեն օրինակներին կից՝ նշելով միայն էջը):

³ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 143:

«... Իջավ ոսկեալիք Նեղոսի ափերը և մի վայելչակազմ ու դեռատի արմավենու ոտների տակ փռվեց հևիհև» (Սիրահար քամին-22):

«Վարդենու թփերի վրա կանգնել էին հինգ սոխակ» (Մի սոխակի մահը-54):

«Մեր պարտեզի բարձր բարդիի վրա...երկու արագիլ իրենց բույնն էին հյուսել» (Ազավոր արագիլը-51):

«Նա մտավ լեռան լանջերի անտառները, կտրեց կաղնիի մի մատաղ ճյուղ...» (Արծվամանուկ-102):

«-Դուք ներքողում եք բռնեցքն իշխողի, որի և այրիի դատն եք պաշտպանում՝ ծեծելով Ձեր քար կուրծքը արյունոտ ձեռքերով» (Ձեր խնդրածը իմ ոտների տակ է-157):

Բայց իրողությունն է, որ Իսահակյանը ի ծայնավորով վերջացող բառերը հաճախ ու հոլովմամբ է գործածում՝ դրանով իսկ նպաստելով այդ հարցում ընդհանուր օրինաչափություն ստեղծելուն:

Երբ երկձևությունը դրսևորվում է ոչ թե հին ու նոր ձևերի, այլ հիմնականում հավասար նշանակություն ունեցող ձևերի միջև, զգացվում է, որ դրանցից մեկի կամ մյուսի գործածումը այս կամ այն չափով պայմանավորված է արտահայտչական համգամաճով: Հեղինակի արձակում «սեր» բառի սեռական հոլովը գործածված է երեք ձևերով՝ սիրու, սիրո, սերի:

Իսահակյանի ստեղծագործություններում սերը մարդկային կյանքի գերագույն արտահայտությունն է, աշխարհի հայտնագործությունը, կյանքի կենսական անհրաժեշտությունն ու անմար հույսը, մարդու անվերջանալի կարոտն ու տենջը, կսկիծն ու երանությունը: Նա մարդու հոգուն տալիս է բանաստեղծական զարմանալի նրբություն: Ըստ Իսահակյանի՝ սերը չի ենթարկվում չարին ու բռնությանը, նա ազատ է: Հավանաբար հենց այս մտորումներն էլ առաջ են բերել սեր բառի հոլովական զուգածությունները: Ուշադիր լինելու դեպքում դժվար չէ նկատել, որ սիրու ձևը գործածված է սովորական խոսքում, սիրո ձևը՝ համեմատաբար հանդիսավորությամբ օժտված խոսքում, իսկ սերի ձևը գործածված է ոչ թե «զգացմունք», այլ «սիրո առարկա» նշանակությամբ: Բառը «ի» հոլովիչով գործածելով՝ Իսահակյանը փորձել է ընդգծել բառի առարկայական, թանձրացական նշանակությունը:

«Մարին տխուր ծվեններ արծակելով մոլո՛ր-մոլո՛ր դառնում է սիրու համար կյանքը տված երգչի շուրջը...» (Հավերժություն-55):

«...Ինչպես արևը Ջորուսաարի բոցավառում է լանջերը մարգարտաշեն գագաթների՝ սիրո երազների նման ծաղիկներով չքնաղ արշալույսի» (Լեռների հսկան-115):

«...Խնում էին երկու անդավաճան ընկերների սիրո անվախճանության համար» (Լուսթյան ասպետը-175):

«Պանդխտական ուղիներին վրա ես հանդիպեցի իմ սերին» (Հավերժություն-56):

Ձևաբանական կարգը սահմանում է, որ -ոջ հոլովան պատկանող բառերը կազմում են իմաստային նեղ խումբ (ազգակցական կապեր ցույց տվող)՝ կին, քույր, տալ, սկեսուր, տեգր, աներ, նաև ընկեր, տեր և սրանցով բաղադրված բառերը: Կին բառը ի հոլովմամբ զուգահեռ ձև չունի. «կնկա ձևը բացահայտ հնաբանություն է, և ուղիղ ձևը ոչ թե կինն է, այլ բարբառային կնիկ ձևը»:⁴

Քույրի//քրոջ զուգաձևության մեջ որոշակի իմաստային տարբերություն կա. քույրի ձևի տակ հասկացվում է «բուժքրոջ» իմաստը: Մնացածները զուգաձևություններ են կազմում -ոջ և -ի հոլովումների ենթարկվելու երկձևությամբ, որոնք կանոնական ոչ համագոր տարբերակներ են՝ տալոջ//տալի, տիրոջ//տերի, ընկերոջ//ընկերի, որոնցից երկրորդները բնորոշ են խոսակցական լեզվին: Միաժամանակ հիշենք, որ Մ.Աբեղյանը «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ մեզ հետաքրքրող խնդրի մասին հետևյալն է նշում. «Հնացած են այս ձևերը՝ ընկերոջ, աներոջ, սկեսրոջ, տալոջ, սովորական է՝ ընկերի, աների, տալի, սկեսրի»:⁵

Իսահակյանի արձակում ընկեր բառի սեռականը գրեթե միշտ կազմվում է ի հոլովիչով՝

«Ով կարող է ապրել առանց ընկերի-քարերը միայն և քարասիրտները» (Սիրո երգը-7):

«...Նժույզս բերեք, պատերազմի վաղեմի ընկերիս հարազատ ճետը» (131): («Չիմզիզ խանը»)

Ուրեմն, որպես այդպիսին, այս ձևերը Իսահակյանի արձակում ոչ չեղում կարող են դիտվել, ոչ էլ արտահայտչական նշանակությամբ օժտված ձևեր, քանի որ դրանք ժամանակի համար սովորական են եղել:

Ըստ ձևաբանական կանոնի՝ ան հոլովման պատկանում են գարուն, ամառ, աշուն, ձմեռ բառերը, - ում ածանցով կազմվածները, գրաբարյան և վերջնահնչյուն ունեցող միավանկերի մի մասը և այլն:

Ան հոլովման պատկանող բառերից հատկապես -ում ածանց ունեցողներն են զուգաձևություններ կազմում՝ ցփսման//ցփսումի, շարժման//շարժումի, երդման//երդումի:

⁴ Զ.Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Երևան, 2007, էջ 154:

⁵ Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 346:

Իսահակյանի պատմվածքներում հանդիպում ենք կիրառության այս երկծություններին.

«...Գրեթե կես հավերժություն անցավ մեր անջատման օրից» (Հավերժություն-57):

«- Դավաճան, ուխտադրուժ, քո երդումի համաձայն ես արդար էի կտրելու քո լեզուն...» (Լուսության ասպետը-178):

«...Քո զգացող գոյությունը չարժե իր ձգտումին, և ոչ մի նպատակ չարժե» (Երջանկության իմաստը-45):

Գարուն, ամառ, աշուն, ծմեռ բառերը պատկանում են ան հոլովման, սակայն սրանցից ամառը և ծմեռը ենթարկվում են մահ վա հոլովման՝ ստեղծելով զուգաձևություններ, որոնք գործածվում են գրական նորմի շրջանակներում:

Ձևաբանական կանոնից շեղում պետք է համարել խոսակցական լեզվում հանդիպող աշունի, գարունի, ամառի ձևերը: Ուրեմն՝ գարնան//գարունի// գարունքվա, ամռան//ամառի//ամառվա, աշնան//աշունի//աշունքվա, ծմռան//ծմեռի//ծմեռվա եռաձևություններում ձևաբանական նորմով սահմանվածներն առաջին տարբերակներն են, երկրորդները ժողովրդախոսակցական երանգ ունեն: Աշունքվա, գարունքվա ձևերը հնացած են և բարբառային:

«Գարնան ցողացող ծաղիկներին մեկ-մեկ զգվում է մահ և փունջ հյուսում» (Նա չեկավ...-48):

«Դա՛ նվիրական Հիմալայի գրկումն էր, հավերժական գարունի՝ պարտեզում, չքնաղ Քաշմիրի հովտում» (Հավերժություն-59):

«Ապրում էին մարդիկ, երգում ու սիրում անթառամ գարունքվա մեջ...» (Ինչպես եկավ մահը-216):

Ինչպես նկատում ենք, Իսահակյանի ստեղծագործության մեջ նկատվում են հոլովական երեք ձևեր, որոնցից յուրաքանչյուրը գտել է իր ուրույն տեղը՝ ըստ համապատասխան ոճական երանգավորման:

Ա հոլովման պատկանող -յուն վերջնահնչյուն ունեցող բառերն են կազմում տարբերակային ձևեր՝ անկյան//անկյունի, ծյան//ծյունի, սյան//սյունի, արյան//արյունի, որոնք հավասարապես հանդիպում են գրական լեզվում և ձևաբանական համագոր տարբերակներ են:

«Ով մարդ, արյունի ծնունդ և կրքի ծարավ» (Երջանկության իմաստը-45):

«Բարձրացան տանիքը և գտան Հիլլեին ծյունի հաստ շերտի տակ ծածկված...» (Ռաբբի Հիլլելը-209):

* 2. Սղաջանյան, նշվ. աշխ., էջ 154:

«Ձմրուխտե և հակինթե թասերի մեջ եռում է գինին, երիտասարդ զինվորի արյան պես (Չինգիզ խանը-129):

Մահ բառը ժամանակակից հայերենում վան հոլովման պատկանող միակ բառն է: Այս բառի կանոնական ձևն է մահվան: Մահվան//մահի//մահու եռաձևության մեջ վերջին երկու տարբերակները գործառական սահմանափակում ունեն: Իսահակյանի պատմվածքներում հազվադեպ ենք հանդիպում մահի ձևին, հիմնականում գործածական է կանոնավոր՝ մահվան ձևը: Երևույթի գաղափարն ընդգծվում է ավելի շատ մահվան բառաձևով:

«Անծայրածիր օվկանոսի մութ ալիքները տանում են հաղթական մահվան իշխանությունը...» (Աղջկա ամրոցը-217):

«Մահվան մերձ օրերում աշխարհը աչքից դառնում է անարժեք» (Մեծ ճշմարտությունը-248):

«...Ապա սրտառուչ աղետաճնդով թախանձեց մահին» (Անանդան և մահը-146):

«...Մեր եղկելի կյանքը թաթախված է մահին սարսուռով» (ն.տ.-147):

Այսպիսով՝ յուրաքանչյուր գրող առաջնորդվում է մայրենի լեզվում արմատացած ձևաբանական օրենքներով ու կանոններով: Սակայն հիմք ընդունելով լեզվում եղած ձևաբանական հիմնական կարգերը՝ ստեղծագործողը ամենևին չի սահմանափակվում դրանցով: Այստեղ ևս դրսևորվում են գրողի անհատական ոճի յուրահատկությունները:

Ավետիք Իսահակյանի պատմվածքներում հանդում ենք այնպիսի ձևերի, որոնք թեև մասամբ շեղվում են լեզվական օրինաչափություններից, բայց կարևոր են գեղարվեստական խոսքում հեղինակային բազմաթիվ նպատակադրումներ իրագործելիս:

Ի վերջո, Իսահակյանի գեղարվեստական արձակում տեղ գտած հոլովական զուգածությունների ամբողջությունը մեկ անգամ ևս վկայում է, որ գրողի լեզվի բնույթը, դրա յուրահատկությունները պայմանավորված են ստեղծագործության թեմայով, կերպարների գեղարվեստականությամբ, ստեղծագործության ժանրային յուրահատկություններով և հեղինակի անհատական լեզվա-ոճական առանձնահատկությամբ:

⁷ Լույս տեղում էջ 157: